'ի գմբեթն այն, և ոչ ոք գիտէր թէ ով թաղեալ է անդ. և այլազգիք պնդէին թէ քրիստոնեայք չունին իրաւունս ձեռն մխել յայն տեղի։ Ապա ստուգեալ հաստատեցաւ թէ տեղին յորոյ վերայ չինեալ են Լատինք գմբեթ, էր տուն Ս. Աստուածածնի, որպէս ասէին քրիստոնեայք. Լատինք չինեալ էին զայն 'ի ձեւ եկեղեցւոյ եւ ուներ սեղան յարեւելս։

Սակայն տեղի եկեղեցւոյն սեփհականութիւն էր այլազգեաց։ Կոչեաց դատաւորն 'ի ժողով անդր զվերակացուս չինութեան այնորիկ, որք էին՝ Լատին վերատեսուչն Սիոնի վանաց և այլք 'ի քրիստոնէից. և եհարց ցնոսա վասն այնր, և նոքա խոստովան եղեն թէ՝ ինքեանք են պատճառ չինութեան եկեղեցւոյն, և դատաւորն պարտաւորեաց զնոսա կործանել զգմբեթն։ Եւ զկնի այսմ քննութեան առաջի եդին այլազգիք Լատինաց զայլ իմն խնդիր կարեւոր. զի 'ի մէջ վանաց Սիոնի էր կամարակապ սենեակ ինչ. տեղի ժողովոյ Առաքելոց և իշման Հոգւոյն Սրբոյ, և ձեւ ինչ տապանի. իբր թէ իցէ գերեզման մարգարէին Դաւթի. քրիստոնեայք պնդէին վասն այնր թէ՝ 'ի վաղ ժամանակաց անտի է 'ի ձեռս իւրեանց, յորոյ վերայ բազմադիմի վէճս յարուցին այլազգիք՝ իբր 100 ամ՝ աք յառաջ (1). և խնդիրն եհաս մինչեւ յատեանս առաջին Սուլթանաց, և գրեցաւ յայնժամ հրովարտակ վասն այնր. յորմէ սաստկացաւ վէճն 'ի մէջ քրիստոնէից եւ այլազգեաց. երբեմն յափշտակէին զայն այլազգիք, և քրիստոնեայք դարձուցանէին. եւ խնդիրն մնաց անորոշ մինչ 'ի ժամանակս Մէլիք Զահր Զագմագի, եւ յատենի նորա վերստին քննեցաւ խնդիրն և տուաւ հրովարտակ 'ի թուին՝ ՌՕԶ (1468)։ Որպէս գրեցաք յառաջագոյն. և 'ի սոյն թուականէ մնաց գերեզմանն Դաւթի 'ի ձեռս այլազգեաց. չինեցին անդ մեհրաբ 'ի կողմն հիւսիսոյ, ուր էր երեւոյթն՝ զորմէ ասէին թէ՝ է գերեզման Դաւթի, և կարգեցին վերատեսուչ եւ ռոմիկ 'ի

---

(1) Հայկական յիշատակարանն այսպէս յառաջ բերէ 1291 յամին՝ այլազգիք առին զՍիոն 'ի ձեռաց Լատինաց. և յետ ժամանակաց՝ միջնորդութեամբ Ռոպերթոս Թագաւորին Սիկիլիոյ վերստին ժառանգեցին զայն ամ իբր 13. և յետոյ խոպան արտաքսեցան անտի։